Սարգսյան Ս., *«Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., «Անտարես» հրատ., 2014, 679 էջ:*



Հայ պատմագրության ուշադրության առանցքում շարունակում է օրակարգային մնալ XIX դարավերջի և XX դարասկզբի ազգային ազատագրական մաքառումների ուսումնասիրությունը: Շատերն են անդրադարձել վերոնշյալ թեմային: Սակայն պատմաբան Սուրեն Սարգսյանը առաջինն է, որ ամբողջական մի ուսումնասիրություն է հրապարակել Ֆրանսիայի Մարսել քաղաքում 1885 թվականից լույս տեսնող «Արմենիա» պարբերականի գործունեության վերաբերյալ:

«Արմենիա» պարբերականի հիմնադիրն ու անփոփոխ խմբագիրը հայ մեծանուն հրապարակախոս, ազգային և քաղաքական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանն է, որն իր ամբողջ կյանքը նվիրաբերեց հայ ժողովրդի քաղաքական ազատագրության դատին: Առաջաբան խոսքում հեղինակը անդրադառնում և գնահատում է սույն հիմնահարցի շուրջ տարբեր հետազոտողների՝ հայրենիքում և սփյուռքում կատարած աշխատանքները: Վերոնշյալների թվում հատկապես կարևորվում են վաստակաշատ պատմաբաններ Ջ. Կիրակոսյանի, Գ. Գալոյանի, Հր. Սիմոնյանի, Ն. Սարուխանյանի, Է. Կոստանդյանի, Կ. Դալլաքյանի, Ա. Համբարյանի, Ստ. Պողոսյանի ունեցած ներդրումները հիմնահարցի գիտական, անկողմնակալ մշակման ու զարգացման գործում:

Առաջին գլխում («Մկրտիչ Փորթուգալյանը արևմտահայ ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ակունքներում») ծավալուն կերպով ներկայացված են մեծ հայրենասեր Մ. Փորթուգալյանի կյանքի, մանկավարժական և հասարակական-քաղաքական գործունեության փուլերը՝ էական դրվագներով ու մանրամասներով: Ճշմարտացիորեն դրական գնահատական է տրվում Փորթուգալյանի ողջ գործունեությանը՝ նշելով, որ նա առաջիններից էր հայ ժողովրդի ազատագրական մաքառումները կազմակերպչական ուղղորդված հունի մեջ դնելու և նպատակասլաց կերպով առաջ տանելու առումով: Հատկապես զգալի էր Փորթուգալյանի ազգանվեր գործունեության հոգևոր-բարոյական մեծ ազդեցությունը Վան-Վասպուրականի երիտասարդ սերնդի վրա XIX դարի 80-90-ական թվականներին: Նա հայ ազգային-քաղաքական եզակի գործիչներից էր, որը մերժեց թուրքական իշխանությունների հետ ամեն մի գործակցություն, կրեց

զրկանքներ ու հալածանքներ, սակայն երբեք չմտածեց հեղափոխական պայքարը դադարեցնելու մասին:

Երկրորդ գլխում («Արմենիա» պարբերականի ծնունդը) հիմնավորապես հետազոտվում են այն հանգամանքներն ու գործոնները, միջավայրն ու խնդիրները, որոնք նպաստեցին ազգային ազատական ուղղվածությամբ հայկական նշանավոր պարբերականի լույս աշխարհ գալուն: Հեղինակը նշում է սույն հիմնական խնդիրները, որոնք Փորթուգալյանը դրել էր իր առջև՝ «Արմենիայի» հրատարակությանը ձեռնարկելով.

«ա) աշխարհի տարբեր մասերում բնակվող հայության բոլոր հատվածների միջև կապ ստեղծել և հետագայում ամրապնդել ու խորացնել այդ կապերը:

բ) համակարգել և կարգապահություն հաստատել «հնաբնակ հայերին մեջէն», համախմբել նրանց ուժերը հօգուտ հայանպաստ գործերի:

գ) օգտվելով ֆրանսիական հանրապետության ազատ և մարդասիրական օրենքների ընձեռած հնարավորությունից, հաստատել այնտեղ հայկական տպարան, սակայն մշտապես հարգելով հայաշատ երկրների՝ Թուրքիայի, Ռուսաստանի և Պարսկաստանի (որտեղ պիտի տարածվեր «Արմենիան»–Ս.Ս.) հաստատած օրենքները» (էջ 63–64): Մանրամասն վերլուծվում են թերթի կատարած գործառույթները, նրա ընդհանուր նկարագիրն ու քարոզչական առաքելության հիմնական միտումները: Ս. Սարգսյանը, անաչառորեն քննության ենթարկելով պարբերականի գաղափարախոսական ներկապանակի ողջ բաղադրությունը, իրավացիորեն հանգում է այն եզրակացությանը, որ պարբերականը մեծապես նպաստեց հայ ժողովրդի քաղաքական զգոնության, դիմադրական ոգու և կորովի բարձրացմանը, սեփական հայրենիքն ու պետականությունը ունենալու համոզմունքների ամրապնդմանը:

Աշխատանքում բացահայտվում են այն դժվարին հանգամանքները, միջավայրն ու պայմանները, որոնցում կայացան սույն պարբերականի ծնունդն ու գործունեությունը: Փորթուգալյանը եղավ այն եզակի հայ անհատը, որը գրեթե մեն-մենակ (հաճախ նեցուկ ունենալով լոկ երկու դուստրերին) կարողացավ դիմագրավել անթիվ-անհամար դժվարություններին և անվհատ շարունակեց հրապարակել բարձր գաղափարայնությամբ օժտված, հոգեկան և ազգային ճշմարիտ արժեքներ սահմանող իր պարբերականը:

Երրորդ գլխում («Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կացության արտացոլումը «Արմենիայում») թերթի նյութերի հիման վրա լավագույնս ներկայացված է Արևմտահայաստանում տիրող իրավիճակը՝ իր բնութագրական կողմերով: Հեղինակն իրավացիորեն նկատում է, որ «Արմենիա» պարբերականը այն եզակի լրատվամիջոցներից էր, որի էջերում գրվում, ասվում էր ողջ ճշմարտությունը (ոչ թե կիսատ-պռատ), ինչքան էլ այն տեղի տար ոչ միանշանակ մեկնաբանությունների: Թերթը տպագրում էր Արևմտյան Հայաստանից ուղարկվող բազմազան նյութեր, որոնց հիման վրա բացահայտելի էր դառնում այն ճշմարտությունը, որ թուրքական բարձրագույն իշխանությունների կողմից հետևողականորեն իրագործվում էր

հայաթափման ու հայաջնջումի քաղաքականությունը: Պարբերականի «Նամականին» տարիների ընթացքում դարձել էր հայ հանրությանը հուզող, ուրեմն և ամենից շատ ընթերցվող բաժիններից մեկը: Խմբագրությունը նամակներ էր տպագրում Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայաբնակ նահանգներից ու գավառներից: Այդ նամակները սկզբնական շրջանում հիմնականում սոցիալական բնույթ ունեին, սակայն հետագայում վերափոխվեցին ու «ավելի հաճախ սկսեցին պարունակել նաև քաղաքական պահանջներ, իսկ երբեմն էլ տոգորված էին զայրալի, պոռթկումնալից ու հայերի նկատմամբ դարեր ի վեր գոյություն ունեցող աղաղակող անարդարությունները փշրելու, վերացնելու շնչով» (էջ 136),– ճշմարտացիորեն եզրահանգում է աշխատության հեղինակը:

Անկողմնակալ դիտանկյունից վերլուծվում, բացահայտվում են թերթի կողմնորոշիչները, նրա համակրանքն ու հակակրանքը, դիրքորոշումները հասարակական-քաղաքական զանազան հիմնախնդիրների և արժեքների նկատմամբ: Հետազոտողը քննադատում, ժխտում է բազմաթիվ հիմնագուրկ պնդումներ ու տեսակետներ, որոնցով «Արմենիա» պարբերականին վերագրվել են անհիմն սխեմաներ ու գաղափարական կաղապարներ:

Վերոնշյալ հիմնագուրկ պնդումներից մեկն էլ այն էր, որ Մ. Փորթուգալյանը ձգտում էր Արևմտյան Հայաստանի ազատագրությանը հասնել բացառապես եվրոպական դիվանագիտությանն ապավինելով: Սա, իհարկե, ոչ թե չափազանցված տեսակետ է, այլ միանգամայն սխալ: Փորթուգալյանի խմբագրած պարբերականը տարիներ շարունակ, երբեմն մեղմ, երբեմն կտրուկ մերժում էր եվրոպական դիվանագիտության օգտակարությունը Հայկական հարցի լուծման գործում:

Փորթուգալյանը մշտապես հանդես էր գալիս իրատեսական դիրքերից՝ առաջարկելով սեփական մոտեցումներն ու լուծումները: Թերևս այս առումով տեղին է հեղինակի այն հստակ դիտարկումը, որ «Արմենիայի» խմբագիրը մշտապես քարոզում էր նախ կազմակերպվել ու միակամվել, ապա շատ նպաստավոր պահի դուրս գալ ազատամարտի:

Աշխատության չորրորդ գլխում («Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հայեցակետը «Արմենիա» պարբերականի էջերում») խորությամբ քննության են առնվում Մ. Փորթուգալյանի աշխարհայացքային մոտեցումներն Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ազատագրության տեսական ու գործնական խնդիրների շուրջ:

Իհարկե, այս ամենը ներկայացվում է տվյալ ժամանակաշրջանի քաղաքական լայն խորապատկերի վրա՝ հստակորեն տարանջատելով այն առանձնահատկություններն ու տարբերությունները, որոնք գոյություն ունեին «Արմենիայի» և հայ քաղաքական դաշտի մյուս հատվածները զբաղեցրած ուժերի միջև: Իսկ հակասություններն ու գաղափարական սուր հակամարտություններն անպակաս էին հայ քաղաքական իրականության մեջ: Մ. Փորթուգալյանն ու նրա պարբերականը հաճախ ստիպված էին միջակա դիրք գրավել երկու ծայրահեղ, հակադիր ուղղությունների միջև

(անմիջապես զենքի և հեղափոխության ձևով հարցը լուծելու և միմիայն դիվանագիտական ուղիներին ապավինելու միջոցով):

Մանրամասնորեն քննելով պարբերականի դրսևորած գաղափարական ներկապնակի ողջ հարստությունը՝ աշխատության հեղինակը հանգում է նրան, որ Փորթուգալյանը հայության քաղաքական պայքարի մեջ բացառիկ դեր էր վերապահում հասարակ ժողովրդին, և այդ առումով նրա դավանած ուսմունքն ստանում էր ընդգծված ժողովրդավարական, մարդասիրական բնույթ: Հոգեբանական ճշմարիտ նրբագծերով են տրված Փորթուգալյանի քաղաքական հայացքներում առկա զարգացումները: Նրա մեջ ծնվում են հայերի կողմից և հայության ուժերով հեղափոխություն բարձրացնելու համոզմունքն ու գաղափարը: Արդեն XIX դ. 90-ական թթ. նա բազմիցս զգուշացնում և ահազանգում էր, որ օսմանյան իշխանությունների որդեգրած քաղաքականությունը առաջիկայում հանգեցնելու է Արևմտյան Հայաստանի ամբողջական հայաթափմանը: Ուստի, նրա համար անհիմաստ էր դառնում հայ-թուրքական համատեղ գոյակցության հեռանկարը, և հրապարակախոսը միանգամայն օրինաչափորեն հանգում էր զենքի օգնությամբ փրկվելու գաղափարին:

Նշենք, որ պատմաբան Ս. Սարգսյանի սույն ստվարածավալ աշխատությունը աչքի է ընկնում արխիվային փաստաթղթերի, ժամանակաշրջանի մամուլի, ազգային կուսակցական գործիչների հուշագրությունների և բազմապիսի այլ նյութերի ընձեռած փաստական հարուստ պաշարներով ու հագեցվածությամբ, որոնց մի զգալի մասը առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ: Այս լրջմիտ և ծանրակշիռ աշխատանքի կարևորությունը զգալիորեն պայմանավորված է նաև ընտրված թեմայի ու ընդգրկված ժամանակաշրջանի տարողունակությամբ, բարդությամբ ու խորությամբ:

Առանձին հարցերում կարելի է չհամաձայնել հեղինակի այս կամ այն դիտարկման հետ, սակայն, ամբողջությամբ վերցրած, կատարված է մեծ և արժեքավոր ուսումնասիրություն, և սույն աշխատությունը անվարան կերպով պետք է դասել հայագիտությունը հարստացնող մնայուն գործերի շարքում:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա.Հ.
Պատմական գիտությունների թեկնածու